

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի, Գալուստ Սահակյանի, Արա Նռանյանի, Սամվել Սարգսյանի, Վարդան Բոստանջյանի և Կարեն Վարդանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն սկզբունքորեն դեմ չէ «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում թվարկված հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերության վճարմանը՝ եռամսյա ժամկետում համապատասխան բյուջե մուծելու դրույթին, քանի որ դա արդեն իսկ կարգավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով:

Կարևորելով ջերմատնային արտադրության, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների, լճակային ձկնաբուծության ոլորտներում գործարար ակտիվության զարգացումը՝ խնդիր ենք տեսնում հետևյալում՝ այսօր

ստեղծվել է մի իրավիճակ, երբ ավելի շահավետ է փոփոխել ավելի թանկ կադաստրային արժեք ունեցող և գյուղատնտեսության համար առավել պիտանի և բարձրարժեք (օրինակ, ջրովի վարելահող) հողամասերի նպատակային նշանակությունը, քան այլ նշանակության համար անպիտան, ուստի և՛ էժան հողամասերինը, քանի որ հաշվարկվում է այդ հողամասերի և ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման ու սպասարկման համար հատկացված հողերի կադաստրային գների տարբերությունը: Կարծում ենք, որ գործարարների համար, ովքեր ջերմատնային արտադրության, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների, լճակային ձկնաբուծության ոլորտներում պատրաստվում են իրականացնել խոշոր ներդրումներ, նախագծում նշված արտոնությունը (նվազեցնող 0,3 գործակցի կիրառումը) դժվար թե հանդիսանա լուրջ խթան, և գտնում ենք, որ գյուղատնտեսության արտադրության որոշակի ճյուղերի զարգացումը հնարավոր է առավել արդյունավետ խթանել այլ համալիր միջոցառումների իրականացմամբ:

Բացի դրանից, հողամասերի նպատակային նշանակության փոփոխման հետ կապված մուծումները հանդիսանում են համայնքների բյուջեների սեփական եկամուտների որոշակի մասն են, իսկ առաջարկվող նախագծով դրանք փաստորեն կրճատվում են, ինչը հակասում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի դրույթին, համաձայն որի «Պետությունն իր ընդունած օրենքներով չի կարող ավելացնել համայնքի պարտադիր լիազորությունները կամ նվազեցնել եկամուտները՝ առանց համապատասխան ֆինանսական փոխհատուցման, սույն օրենքի 67-րդ հոդվածին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:»:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-761-11.11.2009-SՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի (2 մայիսի 2001թ.) հոդված 7-ը լրացնել նոր՝ 8-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

«8. Քաղաքացիների կամ իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը, սեփականատիրոջ նախաձեռնությամբ, սահմանված կարգով փոփոխվելու դեպքում, բացառությամբ՝ ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների եւ ձկնաբուծական արհեստական լճակների համար օգտագործվող հողամասերի, հողամասի սեփականատերը՝ ըստ գույքի գտնվելու վայրի, եռամսյա ժամկետում համապատասխան բյուջե (համայնքների վարչական սահմաններում՝ տեղական, համայնքների վարչական սահմաններից դուրս՝ պետական) մուծում է հողամասերի կադաստրային արժեքների՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

Ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների եւ ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման եւ սպասարկման համար հատկացված հողերի կադաստրային գների նկատմամբ կիրառվում է նվազեցնող՝ 0.3 գործակիցը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱԼՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացման եւ երկրում գյուղատնտեսության զարգացման խթանման նպատակով խիստ կարեւորվում է ջերմատնային արտադրության, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների, լճակային ձկնաբուծության ոլորտներում գործարար ակտիվության զարգացումը: Այս հիմնախնդիրն առավել կարեւորվում է Հայաստանի Հանրապետության լեռնային, սահմանամերձ գոտիներում: Մակայն ներդրումների իրականացմանը խոչընդոտում է այն հանգամանքը, որ վերը նշված ոլորտների տնտեսությունները՝ ջերմոցներ, անասնաշենքեր, թռչնանոցներ, իսկ ձկնաբուծական տնտեսությունները՝ արհեստական լճակներ կառուցելու համար պետք է սահմանված կարգով փոխեն հողերի նպատակային նշանակությունը, որը պահանջում է լրացուցիչ ծախսեր՝ հողերի նպատակային նշանակությունը փոխելուց պետք է վճարվի դրանց կադաստրային արժեքի տարբերությունը:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային արտադրության, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսությունների, լճակային ձկնաբուծության ոլորտների զարգացումը խթանելու նպատակով, անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով սահմանված կարգով կատարել համապատասխան լրացում՝ հնարավորություն ստեղծելով քաղաքացիների կամ իրավաբանական անձանց համար կադաստրային արժեքի գրո տոկոսը վճարելով, ապահովել իրենց գործունեության համար կառուցվող անշարժ գույքի պետական գրանցումը: Հետագայում սա կբացառի անօրինական կարգով անհրաժեշտ շինությունների կառուցումը եւ օգտագործումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առաջարկվում է նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում համապատասխան փոփոխություններ եւ լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 եւ 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշումների մեջ: